ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«15» 06 2016թ.

Հաստատում եմ՝
«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
պետ Մ. Անանյան

ՍՑ-ԳԲԽ-39/15 բողոքը քննող
հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 05.12.2014թ. N 73-1/715724-14 գրությամբ ներկայացված «Սպառշինարդ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00410971) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը 05.12.2014թ. N 73-1/715724-14 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ առաջարկելով ուսումնասիրել «Սպառշինարդ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում կազմակերպել

բողոքարկման գործընթաց՝ կից ներկայացնելով Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 04.12.2014թ. N 01/61-15905 գրության պատճենը:

2. «Սպառողինարդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետը, կարծիք ստանալու նպատակով 15.12.2014թ. N 09/032-2050 գրությամբ դիմել է «Սպառողինարդ» ՍՊԸ-ին:

«Սպառողինարդ» ՍՊԸ-ն 24.12.2014թ. N 1/26 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի և Ընկերության միջև 16.04.2014թ. կնքված «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-14/48» ծածկագրով պայմանագրի համաձայն՝ Ընկերությունը պետք է իրականացներ Նոր Նորք վարչական շրջանի 4-րդ զանգվածի Բակունցի 2-րդ նրբանցք 13/2 և 5-րդ զանգվածի Մառի 9-րդ բազմաբնակարանային շենքերի թեք տանիքների վերանորոգման աշխատանքները:

Աշխատանքների իրականացման ժամանակ Ընկերության, տեխնիկական հսկողություն իրականացնող «Սուֆետ» ՍՊԸ-ի և նախագիծը իրականացրած «ԹԱՀԳ ԳՐԻԳ» ՍՊԸ-ի կողմից ուսումնասիրվել է տանիքների վիճակը, ինչի արդյունքում պարզվել է, որ նախագծա-նախահաշվային փաստաթղթերում առկա են լուրջ բացթողումներ, մասնավորապես՝ նախահաշվում և ծավալաթերթերով բացակայում են ջրհորդանները և ջրհոսները, ինչպես նաև դրանց տակ իրականացվող տախտակամածները, քիչ է նախատեսված պահանջվելիք փայտանյութի ծավալները, բացթողումներ կան նաև քանդման և տեղափոխման աշխատանքներում և այլն:

Ընկերության պնդմամբ՝ Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը, որն ըստ 16.04.2014թ. կնքված «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-14/48» ծածկագրով պայմանագրի 8.9 կետի՝ հանդիսանում է նշված պայմանագրով նախատեսված պատվիրատուի իրավունքները և պարտականությունները իրականացնողը և «Սուֆետ» ՍՊԸ-ն, որը հանդիսանում է աշխատանքների տեխնիկական հսկողություն իրականացնողը, թույլ չեն տվել Ընկերությանը պայմանագրի անբաժանելի մասը կազմող ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան կատարել աշխատանքներ:

Ընկերության պնդմամբ՝ պայմանագրով նախատեսված աշխատանքների չկատարելը չի բխել վերջինիս շահերից, ինչի վկայությունն է նաև Ընկերության կողմից Նոր Նորք

վարչական շրջանի ղեկավարին և Երևանի քաղաքապետարանին ուղարկված բազմաթիվ նամակները:

Ընկերության կողմից 07.07.2014թ. ուղարկված N 1/12 գրությանը ի պատասխան՝ Նոր Նորք վարչական շրջանը 18.07.2014թ. N 27/02-48/1814 գրությամբ հայտնել է, որ օբյեկտներում աշխատանքների կատարման հարցը քննարկման փուլում է և Ընկերությանը կտեղեկացնեն լրացուցիչ:

3. Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 15.12.2014թ. N 011/032-2048 գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետարանին՝ խնդրելով կարծիք տալ Ընկերությանը Ցուցակում ներառելու հարցի վերաբերյալ:

Պատվիրատուն 25.12.2014թ. N 02/61-71086h գրությամբ տրամադրել է Երևանի քաղաքապետարանի և «Սպառշինարդ» ՍՊԸ-ի միջև 16.04.2014թ. կնքված «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-14/48» ծածկագրով պայմանագիրը (այսուհետ նաև՝ Պայմանագիր) և Պայմանագիրը միակողմանի լուծելու հիմքերը:

Վերը նշված փաստաթղթերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ Պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված 15 240 112 ՀՀ դրամ ընդհանուր արժեքի աշխատանքներն Ընկերության կողմից չեն կատարվել, ինչի արդյունքում Պայմանագիրը միակողմանի լուծվել է:

4. ՍՑ-ԳԲԽ-39/15 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 05.12.2014թ. N 73-1/715724-14 գրությամբ «Սպառշինարդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի և «Սպառշինարդ» ՍՊԸ-ի միջև 16.04.2014թ. կնքվել է «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-14/48» ծածկագրով կապիտալային աշխատանքների կատարման գնման պայմանագիր:

2. Պայմանագրի թիվ 2 հավելվածով՝ օրացուցային գրաֆիկով, սահմանվել են կապալառուի կողմից կատարվելիք երկու առանձին տեսակի՝ Երևան քաղաքի Նոր Նորքի վարչական շրջանի Նոր Նորքի 4-րդ զանգված Բակունցի 2-րդ նրբ. հ. 13/2 շենքի տանիքի և Երևան քաղաքի Նոր Նորքի վարչական շրջանի Նոր Նորքի 5-րդ զանգված, Մառի հ. 9 շենքի տանիքի նորոգման՝ համապատասխանաբար թվով 11 և 17 աշխատանքներ:

3. Պայմանագրի թիվ 2 հավելվածով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել 30.09.2014թ.:

4. Ընկերությունը Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ ծավալաթերթով նախատեսված աշխատանքները 30.09.2014թ. դրությամբ չի կատարել:

5. Պատվիրատուն 09.09.2014թ. թիվ 61/3140 և 27.10.2014թ. թիվ 61/3454 գրություններով դիմել է Ընկերությանը և հայտնել, որ Պայմանագրով նախատեսված շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողություն իրականացնող «Սուֆետ» ՍՊԸ-ն համապատասխան գրությամբ տեղեկացրել է, որ Ընկերությունը մինչ օրս չի սկսել աշխատանքները: Միաժամանակ, Պատվիրատուն հայտնել է, որ անհրաժեշտ է ներկայացնել համապատասխան բացատրություններ աշխատանքները չկատարելու, ինչպես նաև հիմնավորումներ և ապացույցներ մինչև աշխատանքների վերջնաժամկետը լրանալը, դրանց իրականացման վերաբերյալ, եթե Ընկերությունը նախատեսում է իրականացնել Պայմանագրով նախատեսված աշխատանքները:

6. Ընկերությունը 17.09.2014թ. թիվ 1/18 գրությամբ Պատվիրատուին տեղեկացրել է, որ աշխատանքների իրականացման ժամանակ Ընկերության, տեխնիկական հսկողություն իրականացնող «Սուֆետ» ՍՊԸ-ի, նախագիծը իրականացրած «ԹԱՀԳ ԳՐԻԳ» ՍՊԸ-ի և Նոր Նորքի վարչական շրջանի ներկայացուցչի կողմից ուսումնասիրվել է տանիքների վիճակը, ինչի արդյունքում պարզվել է, որ կան աշխատանքներ, որոնք արտացոլված չեն ծավալաթերթ-նախահաշվում, սակայն դրանց կատարումը պարտադիր է: Մասնավորապես, հիմնական բացթողումը ջրհորդանները և ջրհոսններն են, ինչպես նաև դրանց իրականացման հետ կապված լրացուցիչ նյութերը և աշխատանքները:

7. Պատվիրատուն 26.09.2014թ. թիվ 61/3273 գրությամբ դիմել է նախագծա-նախահաշվային փաստաթղթերը կազմող «ԹԱՀԳ ԳՐԻԳ» ՍՊԸ-ին, որն ի պատասխան հայտնել է, որ Ընկերության կողմից ներկայացված անճշտությունները չէին կարող խոչընդոտ հանդիսանալ տանիքի վերանորոգման համար, քանի որ ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 64-րդ կետի 2-րդ ենթակետով՝ այդ անճշտությունների աշխատանքային ծավալը չի

գերազանցում սկզբնական նախագծի 20 տոկոսը, հետևաբար կարելի էր իրականացրել շինարարական աշխատանքները և այդ անճշտությունները համադրման կարգով ուղղել համաձայն օրենքի:

8. Պատվիրատուն 07.11.2014թ. թիվ 61/6544 գրությամբ Ընկերությանը տեղեկացրել է, որ Երևանի քաղաքապետարանի և «Սպառշինարդ» ՍՊԸ-ի միջև 16.04.2014թ. կնքված կապալային աշխատանքների ձեռքբերման «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-14/48» ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծել է՝ ՀՀ քաղաքացիական 715-րդ հոդվածի և Պայմանագրի 3.1.4 կետի «ա» և «բ» ենթակետերի հիմքով:

<u>5. ՍՑ-ԳԲԽ-39/15 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը</u>

Կենտրոնը, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 05.12.2014թ. N 73-1/715724-14 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 25.12.2014թ. N 02/61-71086h գրությունը և կից փաստաթղթերը, Ընկերության 24.12.2014թ. N 1/26 գրությունը, հայտնում է հետևյալը.

Երևանի քաղաքապետարանի և «Սպառշինարդ» ՍՊԸ-ի միջև 16.04.2014թ. կնքված «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-14/48» ծածկագրով աշխատանքների կատարման գնման պայմանագիր 1.1 կետի համաձայն՝ «Սպառշինարդ» ՍՊԸ-ն պարտավորվել է նույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել նույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Նոր Նորքի վարչական շրջանի թեք տանիքների նորոգման աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվել է ընդունել կատարված աշխատանքը և վճարել դրա դիմաց:

Պայմանագրի 1.3 կետի համաձայն՝ աշխատանքները սկսվում են Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է մինչև սեպտեմբերի 30-ը:

Նույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

Պայմանագրի 3.1.4 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները,

եթե կապալառուն խախտել է նույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը):

«Սպառշինարդ» ՍՊԸ-ն հայտնել է, որ աշխատանքների իրականացման ժամանակ Ընկերության, տեխնիկական հսկողություն իրականացնող «Սուֆետ» ՍՊԸ-ի և նախագիծը իրականացրած «ԹԱՀԳ ԳՐԻԳ» ՍՊԸ-ի կողմից ուսումնասիրվել է տանիքների վիճակը, ինչի արդյունքում պարզվել է, որ նախագծա-նախահաշվային փաստաթղթերում առկա են լուրջ բացթողումներ, մասնավորապես՝ նախահաշվում և ծավալաթերթերով բացակայում են ջրհորդանները և ջրհոսները, ինչպես նաև դրանց տակ իրականացվող տախտակամածները, քիչ է նախատեսված պահանջվելիք փայտանյութի ծավալները, բացթողումներ կան նաև քանդման և տեղափոխման աշխատանքներում և այլն:

Պատվիրատուն 26.09.2014թ. թիվ 61/3273 գրությամբ դիմել է նախագծա-նախահաշվային փաստաթղթերը կազմող «ԹԱՀԳ ԳՐԻԳ» ՍՊԸ-ին, որն ի պատասխան հայտնել է, որ Ընկերության կողմից ներկայացված անճշտությունները չէին կարող խոչընդոտ հանդիսանալ տանիքի վերանորոգման համար, քանի որ ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 64-րդ կետի 2-րդ ենթակետով՝ այդ անճշտությունների աշխատանքային ծավալը չի գերազանցում սկզբնական նախագծի 20 տոկոսը, հետևաբար կարելի էր իրականացրել շինարարական աշխատանքները և այդ անճշտությունները համադրման կարգով ուղղել համաձայն օրենքի:

Կենտրոնը գտնում է, որ Ընկերության կողմից ***Պայմանագրով նախատեսված պարտավորությունները խախտվել են ավելի քան մեկ անգամ,*** ինչը հանգեցրել է Պատվիրատուի կողմից 07.11.2014թ. թիվ 61/6544 գրությամբ Պայմանագրի միակողմանի լուծմանը, ինչի արդյունքում Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտումը:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***<u>եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում</u> ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված*** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած

պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն** են՝

- *նույն կետի «ա» ենթակետերով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,*
- *խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:*

Հետևաբար, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «Սպառշինարդ» ՍՊԸ-ի ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և ***Ընկերությանը վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ***, քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Այսպիսով, Կենտրոնը արձանագրում է, որ «Սպառշինարդ» ՍՊԸ-ի վերաբերյալ դեռևս առկա է Ցուցակում ներառելու միայն մեկ հիմքը, այն է՝ ***Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված և վերջինիս վերագրվող խախտման առկայությունը,*** սակայն Ընկերությանը Ցուցակում ներառելու մասին որոշումը կարող է կայացվել միայն երկրորդ պարտադիր հիմքի՝ ***խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից հայտ ներկայացնելու հանգամանքի*** ի հայտ գալու պայմաններում: Մինչդեռ մինչև վերոհիշյալ եզրակացությունը ՍՑ-ԳԲԽ-39/15 բողոքը քննող հանձնաժողովին տրամադրելը՝ Կենտրոնը չունի որևէ տեղեկատվություն Ընկերությանը վերագրվող խախտում թույլ տալու պահից (07.11.2014թ.) մեկ տարվա ընթացքում գնման որևէ գործընթացին հայտ ներկայացրած լինելու վերաբերյալ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործում առկա չէ որևէ տեղեկատվություն «Սպառշինարդ» ՍՊԸ-ի կողմից խախտումը թույլ տալու օրվանից՝ 07.11.2014թ.-ից, հաշված մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու վերաբերյալ, ուստի առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 05.12.2014թ. N 73-1/715724-14 գրությամբ ներկայացված

«Սպառշինարդ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00410971) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ՝ Մ. Կատվալյան

Գնումների վերապատրաստման և իրավական խորհրդատվության առաջատար մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-39/15 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Եղիազարյան